

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 10-ԻՆ  
ԺԱՄԸ 15:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ՀՅՈՒՄԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՅՔԻ  
ԵՎ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ  
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

---

**քաղ. Երևան  
Մասնակցում էին՝**

***Խորհրդի անդամներ՝***

- |              |   |
|--------------|---|
| Ա. Գևորգյան  | ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար  |
| Գ. Բեգլարյան | ՀՀ տրանսպորտի և կապի նախարար  |
| Տ. Դավթյան   | ՀՀ էկոնոմիկայի նախարար  |
| Ե. Զախարյան  | ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահ                                      |
| Հ. Բեգլարյան | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի առաջին տեղակալ  |
| Ն. Երիցյան   | ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ   |
| Ա. Հովսեփյան | «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն |

***Հրավիրվածներ՝***

- |                 |   |
|-----------------|---|
| Վ. Այվազյան     | ՀՀ ԱԺ-ի պատգամավոր                              |
| Վ. Հովհաննիսյան | ՀՀ ԱԺ-ի պատգամավոր                              |
| Մ. Մելքումյան   | ՀՀ ԱԺ-ի պատգամավոր                              |
| Ա. Զանջուղազյան | ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ-գլխավոր գանձապետ |
| Գ. Մուրադյան    | ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալ      |
| Կ. Արեյան       | Երևանի քաղաքապետի տեղակալ                       |

- |                  |   |
|------------------|---|
| Տ. Գևորգյան      | ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարի տեղակալ   |
| Ռ. Վարդանյան     | ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետի տեղակալ   |
| Ս. Տոնոյան       | ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետի պաշտոնակատար                                      |
| Ա. Բաղայան       | «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ, ծրագրի ղեկավար |
| Ա. Հարությունյան | ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության առաջատար մասնագետ  |
| Վ. Ասլանյան      | ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության առաջատար մասնագետ                                      |
| Ք. Ղալեչյան      | «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի իրավաբան                                      |
1. Հողերի օտարման և տարաբնակեցման ծրագրի իրականացման շրջանակներում (ՀՕՏԾ) առկա հիմնախնդիրների քննարկում և ՀՕՏԾ իրականացման նախնական բյուջեին հավանություն տալու մասին

-----  
(Ա. Հովսեփյան, Տ. Սարգսյան)

**Քննարկումներից հետո որոշվեց՝**

1) հավանություն տալ հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի նախնական բյուջեին.

2) հանձնարարել «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Ա. Հովսեփյանին՝ ավարտել հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի վերջնական լրամշակումը և ԱԶԲ-ի հաստատումն ստանալուց հետո այն ներկայացնել ՀՀ կառավարության հաստատմանը:

2. Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի կառուցվածքի փոփոխությունների և դրա հետ կապված միջոցառումները քննարկելու և հավանություն տալու մասին

(Ա. Հովսեփյան, Տ. Սարգսյան)

**Քննարկումներից հետո որոշվեց՝**

1) հավանություն տալ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի կառուցվածքի և հաստիքների փոփոխությունների վերաբերյալ միջոցառումներին.

2) հանձնարարել «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Ա. Հովսեփյանին՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ՝ ներկայացված առաջարկներն իրականացնելու ուղղությամբ:

3. Այլ հարցեր

(Ն. Երիցյան, Տ. Սարգսյան)

**Քննարկումներից հետո որոշվեց՝** հանձնարարել «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Ա. Հովսեփյանին՝ շինարարական կազմակերպության ներկայացուցիչների հետ համատեղ ուսումնասիրել ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ն. Երիցյանի ներկայացրած առաջարկությունները և ըստ այդմ կառավարման խորհրդի անդամներին ներկայացնել համապատասխան մասնագիտական եզրակացություն:

4. Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի Տրանշ 3-ի հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի (ՀՕՏԾ) մշակման շրջանակներում առկա խնդիրների մասին

(Ա. Հովսեփյան, Տ. Սարգսյան)

**Քննարկումներից հետո որոշվեց՝**

1) հավանություն տալ ԱԶԲ-ի կողմից ներկայացված առաջարկներին և մոտեցումներին.

2) հանձնարարել «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Ա. Հովսեփյանին՝ մեկնարկել Տրանշ 3-ի ՀՕՏԾ-ի նախապատրաստման աշխատանքները՝ համաձայն ԱԶԲ-ի կողմից ներկայացված պահանջների:

5. Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի-Ծրագիր 1-ի շրջանակներում «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի ծրագրի իրականացման խմբի հաստիքացուցակը և պաշտոնական դրույքաչափերը հաստատելու վերաբերյալ առաջարկությունը քննարկելու և հավանություն տալու մասին

-----  
(Կ. Արեյան, Տ. Սարգսյան)

**Քննարկումներից հետո որոշվեց՝**

1) հավանություն տալ ԱԶԲ-ի կողմից «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ին ներկայացված՝ Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի-Ծրագիր 1-ի շրջանակներում «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի ծրագրի իրականացման խմբի հաստիքացուցակը և պաշտոնական դրույքաչափերը հաստատելու վերաբերյալ առաջարկությանը.

2) առաջարկել Երևանի քաղաքապետի տեղակալ Կ. Արեյանին՝ Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի-Ծրագիր 1-ի շրջանակներում «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի ծրագրի իրականացման խմբի հաստիքացուցակը և պաշտոնական դրույքաչափերը հաստատելու վերաբերյալ առաջարկը հարցման կարգով համաձայնեցնել կառավարման խորհրդի բոլոր անդամների հետ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏ



ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ